53. ՁԿԱՆ ՓՈՐՈՒ ԹԱՍ

Կէղնի, չէղնի պառավըմ կէղնի ու ուրին տղեմ. էդ տղեն թոռ-ճի կէղնի։ Ավուրըմ կէրթա թոռ կթալե, հար հ'իրկուն կթալե-չթա-լե, բան չէլնի, հ'իրկուն օր կէղնի, տղեն կասե. «Հ'իրկվան ըռզ-խե, վալա՜յի, հատըմ լէ պիտի թալիմ». ղթոռն օր կթալե, կէլնի ձուկըմ։ Կասե. «Շուքր աստծուն, ձուկըմ լէ հերիք է։ Կտանիմ տուն, էփիմ ուտիմ»։

Կառնե կիգա տուն։

Կասե.—Նանե՛, նանե՛, խուրբա՛ն նանե, ղէղա ձուկ էփե, էր-թամ դուրս հ'իգամ ուտինք։

Պառավն է, կբերե ձկան գլուխ կկտրե, զփոր կիստկե օր է-փե, կտեսնա օր էդ ձկան փոր արծրթե թասըմ կա, կվերցու դնե թարճըրիք, կբերե զձուկ դնե թավի մեշ, կէփե։ Կէփե կխըլըսի, տղեն կդառնա կիգա, կասե.—Նանե, էփի՞ր։

Կասե.—Հա՛, լառ՛, էփեր իմ, վերցի գրի էնադին։

Տղեն կասե.—Նանե՛, խուրբան, նանե՛, գնա շուշեմ՝ գինի լէ բի, խմինք-ուտինք։

Պառավըն կէրթա, կառնե շուշեմ՝ գինի ու կիգա։ Զէ՞ էդոնք շատ խեղճ կէղնին, ավուր ապավեն չկեր ուրանց տուն, ամամ՝ չկեր օր ջուր խմեն։

Կասե.—Նանե, գնա էդա մըր դրկեցանց տնեն կըթխեմ է, ֆըն-ջանըմ է, առ ու էկո, հ'ըլնաք մեշ, խմինք։

Մերն կասե.—Լառ՛, ին վախտ օր զձուկ մորթեցի կէփենք,

արծրթե թասում հ՝էլավ ձկան փոր. վերցեր իմ, դրի էնա տեխ, չէ՞ղնի, զէնի բերիմ, հ՝ըլնաս մեջ, խմիս։

Տղեն կասե.—Հ՝որի՞ չէղնի, ըի տեսնանք։

Մերն կէրթա, կառնե կիգա, կիտա տղեն։

Տղենն օր կիշքե թասն, առանց խմել կսարխոշնա, կբերի կըլնա զգինին մեջ, կխմե։ Օր կխմե կխըլըսի, թասն կվերցու մրոթի վրավեն կտեսնա օր թասի մեջ հըտ բերնին օսկի է լըցուկ. կգարտրկե հ՝առեջ։

Մեկ ինք կխմե, մեկն կիտա ուր մոր։ Ինչ գլխու ցավանք էնինք, ինչ խրդար օր կխմե, ըսգաքիան հետ կդարցու, օսկով կլցվի թաս։

Տղեն է, քանի կէրթա կզանկընա, էլ ձուկ բռնելը թարկ կէնե, ուրին կշինե քոշկ ու սարեմ՝, նստի մեջ։

Ավուրըմ մեկ, մորն կասե.—Նանե՛, նանե՛, զիմ թաս բի, ես պիտի էրթամ թագավորի խաս բաղչի մեջ նստիմ, գինի խմիմ։

Մերն կէլնի կբերե կիտա հ՝ինք։

Տղեն կէլնի կառնե ջիշըմ գինի ու զուր թասն, կէրթա թագավորի խաս բաղչեն կնստի, կքաշե սեղանն հ՝առեջ, զուր գինու շուջեն կդնե վըր սեղնին, մեկ-մեկ կըլնա ու կխմե, զօսկին կկուլոնե հ՝առեջն։

Թագավորի ախչիկ փանջարեն կէղնի, կտեսնա օր տղեմ՝ նըստուկ է ուր հոր բաղչի մեջ, զգինու ջուջեն դրեր է հ՝առեջ, ինչ խրտար օր կխմե, զթասն հետ կդարձու, թասն օսկով կլցվի։ Կասե. «Ես պիտի հ՝էլնիմ էրթամ էդա տղի մոտ, խաբիմ, զէդա թասն առնիմ ընծիկ։

Կէլնի կիշնի, կիգա տղի մոտ, բարև կիտա ու կնստի։ Տղեն կըլնա զթասն ու կիտա ախչկան։ Ախչիկ լէ կառնե կխմե, օր հետ կդարձու, կտեսնա օր լինք օսկի է թասի մեջ, կբերե կըլնա տղի հ՝առեջ։

Տղեն կասե.—Իմ հ՝առեջ հ՝որի՞ կըլնաս, ես օսկու կարոտ չիմ, ամեկու խմած ուրին կէղնի։

Նիհայեթ կուչտ կխմին։

Ախչիկն կասե.—Տղա՛, զէդ թաս տուր ընծիկ։

Տղեն կիշքե աղչկա հ՝ետև, կասե.—Էկո՛, զէդա բան էրե իմ հետ, զթաս իտամ քղիկ։

Ախչիկն կասե. «Հեղրմ օր ես զէդա բան էնիմ էդոր հետ, խոմ

ի՞նչ կա օր կռահե, մեկ հեղով խոմ ես չըմ ճըժովնա՞»։ Կասե.—Թըղ էղնի։

Կքաշին ղուրանք թանեն, աղեն կէլնի ղախչիկ կդնե գետին ու աղեկըմ կհոգա, կէլնի կթորկե կէրթա։ Զթաս կիտա ախչկան։ Օր կէլնի բախչի դռնեն կթորկե կէրթա, կփոշմնի, կասե. «Օս ինչ խալթ էր էրի, մեկ հըղով հ'ո՞րին պիտի խարվենք, զիմ թաս իտենք էդ ախչկան». էլ ձեռքեն կէրթա, կթորկե, հ'իգա ուր տուն։

Տղեն թըղ մնա հոտ, մենք դառնանք վըր ախչկան։

Աստծու ամրով ինը ամիս, ին օր, ին սահաթ, ին դախեն կթմի, չթմի, ախչիկ կպառկի, կբերե տղեմ'։ Կէրթան թագավորին կասին.—Ըպը չասիս, քու ախչիկ էրկու հոդովցեր էր, պառկավ բերեց տղեմ'։

Կկանչե ղջալադչեք, ղախչիկ կիտա ձեռք ուրանց, կասե.—Տարեք զիմ ախչիկ ան վերի սարում' դլուխ, սպանեք, շապիկ թաթխեք արնի մեշ, բերեք ընծիկ, բըլե ուր ձեն իմ անկաճ չընկնի, հ'ընկնի՝ ձզիկ կտոր-կտոր կէնիմ։

Ջալատչեքն է, կէլնին կառնին զէդ ախչիկն ու կէրթան. կէրթան կէլնին բանձր սարում' դլուխ, կբերին զախչկա օտք ու ձեռք կկապին, դնին գետին օր մորթին։

Ախչիկն կասե.—Ջանը՛մ իմ մեղքի տակ հ'որի կմտնիք, ես մեղք գործեր իմ, էդա մախսում էրեխեն ի՞նչ է էրի, թե կէղնի դուք դինաք օր ես շանլու իմ, իմ մեղքի տակ կմտնիք։ Էկեք ինչ խըդար փարա կուզիք, կիտամ ձզիկ, առեք, էդա տեխրանք հովիվ շատ կա, օչխարըմ մորթեք, զիմ շապիկ թաթխեք արնի մեշ, առեք դացնք իմ հոր ասեք. «Մորթեցինք, էդա լէ ուր շապիկ»։

Էն մեկ ջալադչին ասեց.—Վալայի՛, աղեկ կասե, մենք հ'որի՞ էդա էրեխի մեղքի տակ մտնինք։

Կառնին ուրանց բոլամա փարա, կգնին զէգ օչխարըմ, կբերին կմորթին, ախչկա շապիկ կթաթխին արնի մեշ ու կառնին կէրթան թագավորին, կասին.—Մորթեցինք ու էկանք, չը՞ս ավտընա, էդա լէ ուր շապիկ։

Ախչիկն է, հ'էլավ ու հ'ընկավ ճամբախ, գնաց ու հովվիմ' հ'ռաստ էկավ, առավ փորըմ, քաշեց վըր գլխուն, հագավ ձեռքըմ տղեկնակ հալավ ու հ'ընկավ ճամբախ գնաց։ Գնաց քաղաքըմ հ'էլավ դուրս, ղահվեմ' բռնեց ուրեն, զէրեխեն լէ տվեց կնկամ' օր պահե ու ռաղեց խահվաճութեն էնել։

Հըմալ խահվեմ սարքեց օր թագավորին մենակ լայեղ էր։ Ինչ խըդար խահվա օր կեր էդ քաղքի մեջ, զըմեն ման էրեց։ Ձեն հ'ընկավ քաղքներ, ըպա չասիս. «Ֆլան տեխ հըմլա խահվաճիմ' կա օր զխահվեք զըմեն բաթալ է էրի»։ Աշխարքի ճոթեն կփրցնեն կիզեն ու զէդ տզի խահվեն կիշքեն, էրեխեն լէ էղեր էր չորս-հինգ տարեկան։

Ավուրըմ մեկ էդ ախչկա հեր լսեց զէդ խավաճու անուն, ասեց. «Ես պիտի հ'էլնիմ, էրթամ, իշքեմ տեսնամ օր իմալ մարդըմ է էդ խահվաճին օր էդ խըտար մաթ կէնին»։

Հ'էլավ առավ զուր լալեն, տղենն մտավ թավտիլ խըլըզի ու հարցնելով էկավ էդ խահվաճու խահվախանեն գտավ։ Բարև տվեց, մտավ ներս նստավ։ Խահվաճին տեսնելու պես ճանչցավ, էդա ուր հեր, էդա ուր ախպեր, էդա լէ ուրանց լալեն, բըլե հերն չճանչցավ զինք։

Մանցին հար հ'իրկուն, թագավորն ու ուր լալեն օր հ'էլան կէրթեն, խահվաճին ասեց.—Դարվեշ բաբա, հ'ո՞ւր կէրթաք, ես գինամ դուք լէ իմ պես խարիբ իք էդա տեխ, հ'ուր օր էրթաք՝ յա՛մ խան պիտի պառկիք, յա՛մ քյուլխան, էդա տեխ հ'օդեմ' կա, սաղիմ ձզիկ, գացեք պառկեք։

Դարվեշն ասեց.—Խահվաճի ախպե՛ր, օր դու հըմալ աղեկութենըմ էնիս, մենք զմըր աչք քո՞ռ կհ'ուզինք։

Գնաց, հ'օդեմ կեր խահվի մեջ, ավլեց, հ'իստկեց, բերեց յաթաղ փռեց, էկավ ասեց.—Դարվեշ բաբա, հ'օդեն հաղըր է, հրամեցեք էրթանք։

Դարվեշ հ'էլավ առավ զուր հ'ընկերտանք ու գնաց։

Հ'իրկուն օր էղավ, դարվեշն կանչեց զխահվաճին, ասեց.—Տղա՛, կարնա՞ս մզիկ քիչըմ եմակ բերիս, տեխըմ ուտինք։

Խահվաճինն ասեց.—Դարվեշ բաբա՛, դուք ծանտր ձըր տեխ նստեք, աստված էնդոր լէ օղորմած է։

Գնաց, կտորըմ միս տվեց ֆրռուն, աղեկըմ կարմըրցուց, առավ էրկու շուշա լէ դինի հետ էկավ, բերեց դրեց դարվեշի հ'առեջ ու ինք լէ նստավ մեկդին, հանեց ճեբեն զուր թասն, հատըմ խմեց, օր խմեց՝ զթասն հետ դարցուց, դարվեշ տեսավ օր լինք օսկի է էդ թասի մեջ, ախչիկ դարտկեց ուր հ'առեջ, ուր մտքի մեջ ասեց. «Էդա թաս էդներ ընծիկ»։

Կահվաճին լցեց հատըմ լէ դարվեշին տվեց։ Դարվեշ խմեց

խըլըսավ, տեսավ օր օսկով լցվավ ուր ֆընշան, բերեց օր ղարտկեր խահվաճու հ՝առեշ։ Խահվաճինն ասեց.—Ամեկու խմած ուրին կէղ-նի, ես օսկու պետք չունիմ։

Վել հասըլ, մեկ ինք խմեց, մեկ տվեց դարվեշին, մեկ-մեկ հատ լէ դարվեշի հ՝ընկերներուն։

Հար ղդինին խըլըսցուցին, ամեկու հ՝առշև կուլօնըմ օսկի էղավ։

Դարվեշի հ՝երսի փարտեն օր պատռավ, ասեց.—Խահվաճի, ղէդա թաս տո՛ւր ընծիկ։

Խահվաճին ասեց.—Կիտամ, բան չըմ ասի, հեղըմ տուր ընծիկ, իտամ քղիկ։

Դարվեշն ղուշումիշ էղավ՝ էդ բան կէղնի՞, չէղնի, հարցուց ուր հ՝ընկերներուց լէ։ Ասին.—Ի՞նչ կա որ դինա՛։

Ասեց.—Կիտամ, հէլի էրթանք։

Առավ ղդարվեշն հ՝էլավ դնաց հ՝օդեմ. դարվեշ զթունբան օր հանեց, խահվաճին բերեց զուր մատնեք կարմրցուց ու զարկեց դարվեշի հ՝ո... թըշին։

Դարվեշն ասեց.—Խահվեճի, ի՞նչ կէնիս, դը հ՝էլի էրի։

Խահվաճին ասեց.—Իմ էնելն էդ խրտար է։— Տվեց զթասն դարվեշին, թորկեց էկավ նստավ։

Օր էկան նստան, խահվաճին ասեց.—Թագավոր ապրած, դու թասըմ հ՝ապով ղէդա բան էրիր, ըպա քու ախչիկն իմա՞լ էդ թաս հ՝ապով ղէդ բան չէներ։ Օր էրեց, հ՝ո՞րի հ՝էլար տվիր քու շալատ-չոց ձեռք, ասիր՝ տարեք սպանեք։

Դարվեշն ասեց.—Դու իմա՞լ գինաս, իմ ախչիկ էրկու հոգով-ցեր է, տվեր իմ շալատչոց ձեռք, որ տանին սպանին։

Խահվաճին ասեց.—Իմա՞լ չըմ գինա, ես էն ախչիկն իմ,— ղհալավ հանեց թափեց,—ու էդա էրեխեն լէ տղեն է, օր կիգա կփաթվի քու վըղնըվեր։ —Զասի՛ս, էդ էրեխեն հ՝որի՞ կփաթվի իմ վըղնըվեր. արուն է, կէռա։

Թագավորն ասեց.—Էդ թաս քղիկ հ՝ուստե էղի։

Ախչիկն ասեց.—Մըր քաղքի մեշ, ֆըլան տեխ պառավըմ կեր, ավուրըմ մեկ էդ պառվու տղեն առեր էր շուշեմ՝ գինի ու ղէդա թաս, էկեր էր նստի մըր բաղչեն, կխմեր ու ուրեն քեֆ կէներ։ Ես փանշարից տեսա օր էդ տղեն ինչ խրտար խմեց ու զթաս քաշեց մըռթից, օսկով լեցվավ։ Ասի. «Վալայի, ղէդա թաս պիտի առնիմ

էղա տղի ձեռքեն։ Հ՝իշա գացի բաղչեն, մեկ տեխ խմեցինք։ Ասի. «Տղա, ղէղա թաս չը՞ս իտա ընծիկ»։ Ասեց. «Հ՝օ՞րի չըմ իտա, հեղըմ զիմ սիրտ էրե, իտամ քզիկ»։ Ես լէ ասի՝ «Ո՞ր պիտի դինա ես զէդ բան էրեր իմ էդ տղի հետ, յամ մեկ հղով ես չպիտի՞ մնամ»։ Ասի՝ թըղ էղնի։ Քաջեց զիս թանեն, զիմ գործ տեսավ, հ՝էլավ թորկեց գնաց։ Տարին օր թմավ, պառկա բերի զէդա տղեն, դու հասկըցար, տվիր ջալատչոց ձեռք օր տանեն սպանեն, ես լէ քիչըմ փարա տվի, էկա էտա տեխ, էղա խահվաճի։

Նոր թագավոր էդ տեխ վերցուց զախչիկն ու զթոռն առավ էկավ։ Կանչեց զպառվու տղեն լէ բերեց պսակեց վեր. առավ քոշկըմ, սարեմ՝ ջինեց գրեց մեջ, ասեց.—Դը՛, գացեք ձզիկ ապրեք, ես սխալվեցա։

Աստծուց հ՝իշավ իրեք խնձոր. մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին, մեկ լէ՝ անկաճ էնողին։